

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2016 թ-ի փետրվարի 25-ին տեղի ունեցած  
գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Հեռակա ուսուցմամբ հոգեբանություն մասնագիտությամբ մագիստրատուրայի ամփոփիչ  
ատեստավորման արդյունքների մասին / զեկուցող՝ ծրագրի ղեկավարներ/;
2. 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում;
3. Ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների թեմաների և ղեկավարների  
հաստատում;
4. Հրատարակության երաշխավորման հարցը / Սեյրան Ամիրյան «Պերցեպտիվ  
գործընթացներ . քրեստոմատիա», Իրինա Խանամիրյան «Մանկական հոգեթերապիա»  
ուսումնական ձեռնարկ/;
5. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2016-2020 թթ. զարգացման  
ռազմավարական խրագրի իրականացման ժամանակացույց – պլանի քննարկում / զեկ.  
Գ. Պետրոսյան/;
6. ԵՊՀ 100-ամյակին նվիրված ֆակուլտետային միջոցառումների մասին;
7. ՀՀ պաշտպանության նախարարության հետ կրթական- գիտական համագործակցության  
մասին;
8. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին՝ հեռակա ուսուցմամբ հոգեբանություն մասնագիտությամբ մագիստրատուրայի  
ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների  
արդյունքները, որոնք գոհացուցիչ էին: Ծրագրի ղեկավարներ՝ Է. Զաքարյանը,  
Գ. Շահվերդյանը, Ն. Խաչատրյանը և Հ. Ավանեսյանը ներկայացրեցին իրենց  
մասնագիտացումների կատարած աշխատանքները և ստացած արդյունքները: Դեկան

Ա. Բաղդասարյանը ներկաներին ծանոթացրեց ռեկտորատի այն որոշման հետ, ըստ որի նախապաշտպանություն չանցած ուսանողը չի թույլատրվում պաշտպանության:

Որոշեցին՝ Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ավարտական աշխատանքների արդյունքները համարել դրական:

2. Լսեցին՝ 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանն ամփոփեց քննաշրջանի և լուծարքի արդյունքները, որոնք գոհացուցիչ էին:

Որոշեցին՝ ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝ Ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների թեմաների և դեկավարների հաստատման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Էդ. Հարությունյանը, Հ. Ավանեսյանը, Ն. Խաչատրյանը ներկայացրեցին իրենց ամբիոնների ասպիրանտների թեմաները:

Որոշեցին՝ Հաստատել ամբիոնների կողմից առաջարկած թեմաները և գիտական դեկավարներին:

4. Լսեցին՝ Ս. Ամիրյանի և Ի. Խանամիրյանի ուսումնական ձեռնարկների հրատարակության երաշխավորման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց մեթոդ խորհրդի դրական եզրակացությունը: Ն. Խաչատրյանը, Հ. Ավանեսյանը դրական գնահատականներ տվեցին ձեռնարկերին:

Որոշեցին՝ Երաշխավորել Ս. Ամիրյանի և Ի. Խանամիրյանի ուսումնական ձեռնարկները տպագրության:

5. Լսեցին՝ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Ֆակուլտետի դեկանի տեղակալ Գ. Պետրոսյանն ընդհանուր գծերով ներկայացրեց ֆակուլտետի ռազմավարական ծրագրի ժամանակացույցը: Նա տեղեկացրեց, որ ծրագրի էլեկտրոնային տարբերակները կուղարկվեն ամբիոններ:

Որոշեցին՝ ընդունել ի գիտություն:

6. Լսեցին՝ ԵՊՀ 100- ամյակին նվիրված ֆակուլտետային միջոցառումների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ամբիոնների վարիչներին հանձնարարեց քննարկել հարցը և ներկայացնել առաջարկներ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

7. Լսեցին՝ ՀՀ պաշտպանության նախարարության հետ կրթական-գիտական համագործակցության մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը, Գ. Շահվերդյանը, Հ. Միրզոյանը: Նշվեց, որ ամբիոններում քննարկվել է հարցը, որոշակի դասընթացներ արդեն իսկ առանձնացվել են: Հարցը դեռևս քննարկվում է:

Որոշեցին՝ Գիտական խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել նոր առաջարկներ:

8 . Ընթացիկ հարցեր

- Պրակտիկայի կազմակերպման հարցը;
- Կուրսային, ավարտական աշխատանքների և թեզերի մասին հարցը:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան